



Ա. ՏՈԼՍՏՈՅ

ՌԵՂՆԱԿՏՈՒՑԸ

ՊԵՏՅՈՒՆ

ՅԳԻ. ԴԻՄ
5-80

ՃՅՈՂԻՄ
Տ-79

30 MAY 2011

ԱԼ. ՏՈԼՍՏՈՅ



Դ Ե Ղ Ն Ա Կ Տ Ո Ւ Ց Ը

ՆԿԱՐՆԵՐԸ ԲՈՐՈՎՍԿԱՅԻ

ՊԵՏՅՐԱՏ

ՀԼԿՑԵՄ ԿԿ ԿԻՑՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՑԵՐԵՎԱՆ 1988

Տեխ. խմբագիր՝ Ան. Վարդանյան
 Սրբագրիչ՝ Թ. Հովակիմյան
 Կոնտրոլ սրբագրիչ՝ Վ. Ավագյան



34236-62

Գլավլիտի լիազոր՝ Դ-3574. Հրատ. № 4224.

Պատվեր 22. Տիրած 5000.

Թուղթ 62x9. Տպագր. 1 1/4 մամ.

Մեկ մամ. 17,280 նիշ. Հեղինակային 0 25 մամ.

Հանձնված է արտագրության 1 հունվարի 1938 թ.

Ստորագրված է տպագրության համար 5 փետրվարի 1938 թ.

Գինը 50 Կ.



Պատի և սանդուխքի միջև, մի արևոտ անկյունում, խոտի թփիկի վրա նստել էր Դեղնակտուցն ուսարսափով նայում էր մոտեցող Նիկիտին։ Նրա գլուխը յետ եր ընկած մեջքի վրա, իսկ կտուցը դեղին յերկար շերտով նստած եր տուռ զուչին։ Դեղնակտուցը վողջ մարմնով փշաքաղվել էր ու վոտները հավաքել փորի տակը։

Նիկիտը կռացավ Դեղնակտուցի վրա, իսկ սա բերանը լայն բացեց, փոր վախեցնի մանուկին։ Նիկիտը նրան առավ իր ափերի մեջ։ Դադեռ զորշ մի սարյակ էր. ինչպես յերեվում էր փորձել եր թռչել բնից, բայց դեռևս

Թույլ թևերը չեյին դիմացել և նա ցած
եր ընկել ու կուչ յեկել անկյունում, գետնի
վրա տարածված խուտուտիկի տերևների վրա:

Դեղնակտուցի սիրտն ուժգին խփում էր:
«Դեռ աչքս չճպած՝ կուլ կտան ինձ»,—
մտածեց նա: Նա ինքն ել շատ լավ գիտեր,
թե ինչպես պետք է կուլ տալ վորդերին,
ճանճերին, թրթուրներին:

Տղան Դեղնակտուցին մոտեցրեց իր բերա-
նին: Դեղնակտուցը փակեց իր սև աչքերը,
նրա սիրտը թպրտում էր փետուրների տակ:
Բայց Նիկիտը միայն տաք շունչ բաց թողեց
նրա գլխին ու տարավ տուն, — ուրեմն կուշտ
է, վորոշել է մի քիչ հետո ուտել, — մտածեց
Դեղնակտուցը:

Ալեքսանդրա Լեոնտևնան սարյակին տես-
նելուն պես վերցրեց իր ձեռքի մեջ և Նիկի-
տի նման ոգ բաց թողեց նրա գլխին:

— Խեղճ, դեռ բոլորովին փոքր է, — ա-
սաց նա, — ինչ դեղնաբերանիկն է, իսկական
դեղնակտուց:

Սարյակին նստեցրին դեպի պարտեզ
բացված և շղարշով ամրացրած պատուհանի
գոգում: Սենյակի կողմից նույնպես կիսատ
մի շղարշ կախ արին: Դեղնակտուցն անմի-



Տղան Դեղնակտուցին մոտեցրեց բերնին:

Չապես տեղավորվեց անկյունում, աշխատելով ցույց տալ, վոր այդպես հեշտ չի տա իր կյանքը:

Դրսում, շղարշի ճերմակ մշուշի յետեւում սոսափում եյին տերեւները, ճյուղերի վրա կռվում եյին անարգ, գող ու խռովկան ճնճողուկները:

Մյուս կողմից, ելի շղարշի յետեւից նա-յում եր Նիկիտը. նրա աչքերը մեծ եյին, շարժուն, անհասկանալի, հմայող: «Կորա, կորա», մտածեց Դեղնակտուցը: Բայց Նիկիտն այդպես ել նրան չկերավ մինչև յերեկո, մի-այն շղարշի յետեւը ճանճեր ու վորդեր են գցում: «Ուզում են չաղացնեն հետո...», մրտածեց Դեղնակտուցը և կռացավ կարմիր ու կույր վորդի վրա, վորն ոճի նման գալարվում եր նրա կտուցի առաջ: «Ձե, չեմ ուտի, խաբում են, յերեւի սա իսկական վորդ չի»:

Արեգակն իջավ սաղարթների յետեւ: Գորշ ու քնաբեր լույսի շողը ծանրացնում ե կոպե-րը. Դեղնակտուցն իր ճանկերով ավելի ու ավելի ամուր կպավ պատուհանի գողին: Ահա նրա աչքերն այլևս վոչինչ չեն տեսնում: Պարտիզում թռչունները լռեցին: Դրսից կա-

նաչի և խոնավության քաղցր ու քնաբեր բուրմունք ե գալիս: Նրա գլխիկն ավելի խորն ե թաղվում փետուրների մեջ: Դեղնակտուցը մի անգամ ել փետուրները ցցեց, թեքվեց դեպի առաջ, ապա ծովեց պոչի վրա ու քուն, մտավ:

Նրան զարթեցրին ճնճողուկները, վոր դեռ լուսադեմին աղմկում ու կռվում եյին յասա-մանի ճյուղերի վրա: Վաղորդյան գորշ լույ-սի մեջ կախված եյին թաց տերեւները: Հեռ-վում քաղցր և ուրախ ճովողում եր մի սար-յակ: «Ուժ չկա, ուտել եմ ուզում, նույն-իսկ սիրտս խառնում ե», — մտածեց Դեղնա-կտուցը և աչքը գցեց վորդին, վոր կիսով չափ խցկվել եր պատուհանի գողի ճեղքի մեջ: Նա ցատկեց վորդի մոտ, կտցեց նրա պոչից, դուրս քաշեց ու կուլ տվեց, — «վոչինչ, համով վորդ եր»:

Լույսն ավելի ու ավելի կապտավուն եր գառնում: Թռչունները յերգում եյին: Յեւ ահա տերեւների արանքից Դեղնակտուցի վրա ընկան արևի տաք ու պայծառ շողերը: «Ձե, դեռ ելի կապրենք», — մտածեց Դեղնակտուցը և ցատկելով կտցեց մի ճանճ ու կուլ տվեց: Այդ ժամանակ քայլերի աղմուկ լսվեց



Մատները բանալով լուսամուտի գոգը լցրեց
ճանճեր և սերմեր:

մոտեցավ Նիկիտը, շղարշի գլխից ցած մեկ-
նեց իր անագին ձեռքը և բուռը բաց անե-
լով վորդեր ու ճանճեր թափեց ներս: Դեղնա-
կրտուցը սարսափով խցկվեց պատուհանի ան-
կյունը, թևերը չռեց և վախով նայում էր
ձեռքին: Բայց ձեռքը հանդարտ կախված էր
նրա գլխավերևը, ապա յետ քաշվեց ու անհե-
տացավ շղարշի յետևում և Դեղնակտուցը
տեսավ, թե ինչպես նորից իրեն են նայում
այն տարրինակ, մաշող, փայլփրլուն աչքերը:

Յերբ Նիկիտը գնաց, Դեղնակտուցն ի-
րեն ուղղեց և սկսեց մտածել՝ «ուրեմն նա ինձ
չկերավ, բայց չե՞ վոր կարող էր ուտել: Նշա-
նակում է նա թռչուններին չի ուտում:
Ե՛հ, վոր այդպես է, ել վախենալու բան չկա»:

Դեղնակտուցը կուշտ կերավ, կտուցով փե-
տուրները հարդարեց և սկսեց ցատկոտելով
քայլել պատուհանի գոգի յերկայնքով ու
նայել ճնճողուկներին: Տեսավ փետրաթափ
ծոծրակով մի պառավ ճնճողուկ և սկսեց նրան
ձեռք առնել, ջղայնացնել — ֆյույսու...
չիլիկ-չիլիկ, ֆյույսու: Ծնճողուկը բարկացավ,
փետուրները սպառնագին ուռեցրեց և կր-
տուցը բացած վրա թռավ դեպի Դեղնակտու-
ցը, բայց դիպավ շղարշին ու յետ գնաց: «Ա՛յ,

եղպես ե հա, ինչ վոր գտար, բեր կես ա-
նենք», — մտքումը ծաղրեց Դեղնակտուցը,
պատուհանի յերկայնքով մեկ հպարտ-
հպարտ, քայլելով:

Հետո նորից յերևաց Նիկիտը և այս անգամ
դատարկ ձեռքը ներս խոթեց ու մեկնեց դե-
պի Դեղնակտուցը: Դեղնակտուցը յետ ցատ-
կեց, ինչքան ուժ ուներ կտցահարեց նրա
մատները, յետ թռավ ու պատրաստվեց կռվի:

Բայց Նիկիտը միայն բերանը բացեց ու
գոչեց՝ հա, հա, հա...

Այդպես որն անցավ, — վախենալու բան
չկա, ուտելիքը լավն ե, միայն մի քիչ տխուր ե:
Դեղնակտուցն իրեն մինչև աղջամուղջը
հազիվ զսպեց և այդ գիշեր բավականու-
թյամբ քնեց:

Առավոտյան դեմ նա կերավ և սկսեց նա-
յել տեսնի վորևէ կերպ շղարշի յետևից դուրս
գալու հնար չկա: Շրջեց վողջ պատուհանը,
բայց վոչ մի տեղ անցք չկար: Այն ժամանակ
նա ցատկեց դեպի պնակը և սկսեց ջուր
խմել, — ջուրը հավաքում եր քթիկի մեջ,
կտուցը վեր եր ցցում ու կուլ եր տալիս —
կոկորդով ցած եր գլորվում ջրի գնդիկը:

Որը յերկար եր: Նիկիտը վորդեր բերեց

և սագի փետուրներով մաքրեց պատուհանի
գոգը: Հետո փետրաթափ ծոծրակով ճնճողուն
ուղեց կռվել գորշագուավի հետ, բայց սա
նրան այնպես հասցրեց, վոր խեղճ ճնճողուկը
քարի նման ընկավ տերևների մեջ ու այն-
տեղից սկսեց փետուրները գայրացած փը-
շաքաղել:

Մի կաշաղակ, չգիտես ինչո՞ւ, թռավ յեկավ
ուղղակի պատուհանի տակ, կշկշացրեց, ան-
հանգիստ դես ու գեն ընկավ, պոչը տմբտմբաց-
րեց և վոչ մի խելքը գլխին բան չարավ:

Դորշ շիկահավը յերկար ու քնքուշ յերգեց
ջերմ արևային լույսի մասին, մեղրատու
հազարաթերթիկի մասին: Այդ յերգից Դեղնա-
կտուցը նույնիսկ տրտմեց. նրա կոկորդն
եւ սկսեց յեռ գալ — յերգել եր ուզում, բայց
վճրտեղ, հո շղարշի յետև փակված չեր յերգե-
լու....

Նա նորից շրջեց պատուհանի գոգում և
մի սարսափելի կենդանի տեսավ. կենդանին
փորը գետնին քսելով իր փափուկ թաթերի
վրա մոտենում եր գաղտագողի: Նրա գլուխը
կլոր եր, նոսր ու բիզ-բիզ բեխերով, իսկ կա-
նաչ աչքերը, նեղ բիբերը հրդեհվում եյին
դիվային չարությամբ: Դեղնակտուցը տեղն
ու տեղը սառավ:



Դեղնակտուցի սիրտը կծկվեց և թևերը կախ-
վեցին:

Կատու Վասիլի Վասիլևիչը թեթև վեր-
ցատկեց, յերկար ճանկերով կախվեց պատու-
հանի գոգի յեզրից, շղարշի միջով նայեց
Դեղնակտուցին և բաց արավ բերանը,—
ասոված իմ, նրա բերանում գեղնին եյին
տալիս ժանիքները, վորոնք Դեղնակտուցի
սիրտը կուլ գնաց և թևերը թուլացան... Բայց
այդ ժամանակ — հենց ճիշտ ժամանակին
— յերևաց Նիկիտը, կատվի վզից բռնեց ու
դուրս շարտեց: Վասիլի Վասիլևիչը նեղացած
ճղղաց և պոչը քարշ տալով փախավ:

«Նիկիտից ուժեղ կենդանի դժվար թե
լինի», — մտածեց Դեղնակտուցը: Յեվ յերբ
Նիկիտը նորից յեկավ, Դեղնակտուցը նրան
թույլ տվեց իր գլուխը շոյի, թեև ելի փախից
պպզել եր:

Այդ ուրն ել վերջացավ: Մյուս առավոտ-
յան, յերբ Դեղնակտուցն ուրախ սկսեց նորից
շրջել իր բնակարանում — մի անցք տեսավ
այն տեղում, ուր կատուն ճանկերով պատ-
ուց շղարշը: Դեղնակտուցը գլուխը խոթեց
այդ անցքը և նայեց սենյակի ներսը: Ապա
անցքով դուրս յեկավ, ցատկեց հոսող ու թեթև
ողի մեջ, թռթռացրեց թևիկներով և թռավ
սենյակում հատակից քիչ բարձր: Նա բաց

դռնով անցավ մյուս սենյակը և կտր սեղանի մոտ չորս մարդ տեսավ: Նրանք ձեռքերով անագին կտորներ եյին վերցնում և դնում իրենց բերանները:

Նրանք բոլորն ել յերեսները դարձրին Դեղնակտուցի կողմը և առանց շարժվելու սկսեցին նայել նրան:

Դեղնակտուցը հասկացավ, վոր պետք է կանգ առնել ողում, շուռ գալ և թռչել դեպի յետ, բայց նրա համար դժվար եր թռած ժամանակ շրջադարձ անել, ուստի վայր ընկավ թևերի վրա, հետո ողում շտկվեց և կանգնեց սեղանի վրա՝ մուրաբայի վազի ու շաքարամանի մեջտեղում... յեվ անմիջապես իր առաջ տեսավ Նիկիտին: Այն ժամանակ նա ել չմտածեց, — ցատկեց շաքարամանի վրա, այնտեղից ել թռավ կանգնեց Նիկիտի ուսին, թափահարեց իրեն և նույնիսկ աչքերը կիսով չափ խփեց:

Նիկիտի ուսին մի քիչ նստելուց հետո՝ նա վեր թռավ, առաստաղի տակ մի ճանճ բռնեց, թռթռաց ջահի շուրջը և յերբ քաղց զգաց, թռավ գնաց իր պատուհանը, ուր նրա համար պատրաստել եյին թարմ վորդեր:

Յերեկոյան դեմ, Նիկիտը պատուհանի տակ

մի փայտյա տնակ ամրացրեց, վորը մի դռնակ ուներ և յերկու փոքրիկ պատուհան: Տնակի ներսը մութ եր և այդ դուր յեկավ Դեղնակտուցին, նա ցատկեց այնտեղ, տեղավորվեց իր նոր տնակում ու քնեց:

Իսկ այդ գիշեր կատու Վասիլի Վասիլևիչն իր մեղքի համար փակված մառանում, խռպոտ ձայնով մլավում եր և նույնիսկ, չեր ուզում մուկ վորսալ:

Այդպիսով տանը կատվից և վողնուց բացի սկսեց մի կենդանի շունչ ևս — Դեղնակտուցը: Նա շատ ինքնուրույն եր, խելոք և նախաձեռնող: Նա սիրում եր լսել, թե ինչ են խոսում մարդիկ, իսկ յերբ նրանք նստում եյին սեղանի շուրջը՝ Դեղնակտուցը գլուխը թեքում եր և յերգեցիկ ձայնով ասում՝ «Սաշա» և գլուխ եր տալիս: Ալեքսանդրա Լեոնտևնան հավատացնում եր, վոր Դեղնակտուցը միայն ու միայն իրեն ե գլուխ տալիս: Դեղնակտուցին տեսնելիս մայրիկը միշտ ասում եր՝ «բճրե, բճրե գորշ թռչնիկ — ժիր ու շարածճի»: Իսկ Դեղնակտուցն անմիջապես ցատկում — թառում եր նրա վերաբերվի ոճիքին և մեծ բավականությամբ ճամբորդում եր նրա հետ:

Այդպես նա ապրեց մինչև աշուն, մեծացավ, ծածկվեց սև, փայլուն ազռավային փետուրներով ու թևերով, սովորեց ռուսերեն լավ խոսել: Նա համարյա ամբողջ ուրբ պարտիզում էր ապրում, բայց միջնադն իջնելուն պես անպայման վերադառնում էր պատուհանի տակ — իր բունը:

Ոգոստոսին վայրի սարյակները նրան գրավեցին յերամի մեջ, սովորեցրին թռչելը և յերբ պարտեզում սկսեցին թափվել տերեվները՝ Դեղնակտուցը մի գեղեցիկ արշալույսի յերամի հետ ծովի վրայով թռավ դեպի Աֆրիկա:



ՀՀ Ազգային գրադարան



NL0390729

ԳԻՆԸ 50 ԿՈՊ.

5333

9.0.08

Л. ТОЛСТОЙ
ЖЕЛТУХИН
ГІІЗ АՐՄ. ՏՏՐ, ԵՐԵՎԱՆ